Հ Ր Ա Մ Ա Ն N 516-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«31» ՕԳՈՍՏՈՍԻ 2023 Թ. ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի N 347-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ, 2-րդ կետերով, 21-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 11-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Պրոբացիայի ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կենտրոնական մարմնի կառուցվածքում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Հաշվառման և վիճակագրության բաժինը և Ընդհանուր բաժինը միաձուլել՝ ստեղծելով Փաստաթղթաշրջանառության և հաշվառման բաժին.

2) ստեղծել Անձնակազմի կառավարման բաժին.

3) ստեղծել Ֆինանսատնտեսական բաժին.

4) Նյութատեխնիկական մատակարարման և շահագործման բաժինը միացնել Ֆինանսատնտեսական բաժնին.

5) Էլեկտրոնային մոնիթորինգի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինն անվանափոխել Էլեկտրոնային մոնիթորինգի բաժնի.

6) Կազմակերպամեթոդական բաժինն անվանափոխել Կազմմեթոդական և վերլուծական բաժնի:

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2018 թվականի հուլիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» N 347-Լ հրամանով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

3. Ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնն օրենքով սահմանված մրցութային կարգով համալրվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ուժը կորցրած ճանաչել Արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի 2019 թվականի նոյեմբերի 12-ի «Պրոբացիայի ծառայության քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» N 981-Ա հրամանը, 2019 թվականի նոյեմբերի 12-ի «Պրոբացիայի ծառայության քաղաքացիական

ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 982-Ա հրամանը և նույն օրը Ծառայության գլխավոր քարտուղարի հրամանով հաստատել Ծառայության քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը:

4. Մինչև Ծառայության սույն հրամանի 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված կառուցվածքային ստորաբաժանումներում պաշտոնների՝ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված մրցութային կարգով համալրումը (առնվազն 2/3 մասով) Ծառայության քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցության, կազմակերպական հարցերի կարգավորման, անձնակազմի կառավարման գործառույթները շարունակվում են իրականացնել Արդարադատության նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումները:

5. Սույն հրամանի 4-րդ կետով նախատեսված կառուցվածքային ստորաբաժանումներում պաշտոնների համալրումից հետո՝ մեկամսյա ժամկետում, գործառույթների փոխանցմամբ պայմանավորված Արդարադատության նախարարության համապատասխան իրավական ակտերում կատարել փոփոխություններ:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Invalid signature

X

ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍՅԱՆ

Signed by: MINASYAN GRIGOR 3312830419

ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍՅԱՆ

Հավելված
Արդարադատության նախարարի
2023 թվականի օգոստոսի 31-ի
N 516-Լ հրամանի

«Հավելված
Արդարադատության նախարարի
2018 թվականի հուլիսի 16-ի
N 347-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պրոբացիայի ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) Արդարադատության նախարարությանն (այսուհետ՝ Նախարարություն) ենթակա մարմին է:

2. Ծառայությունը ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով:

3. Ծառայությունը գործում է Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

4. Ծառայության անվանումն է՝

1) հայերեն՝ Պրոբացիայի ծառայություն,

2) ռուսերեն՝ Служба Пробации,

3) անգլերեն՝ Probation Service,

4) ֆրանսերեն՝ Service de Probation:

5. Ծառայությունն, այդ թվում՝ կառուցվածքային ստորաբաժանումներն, ունեն Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իրենց հայերեն անվանմամբ կլոր կնիք, միասնական նմուշի ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

6. Ծառայության կառուցվածքում ընդգրկվում են Ծառայության պետի (այսուհետ՝ Ծառայության պետ), Ծառայության պետի տեղակալների, գլխավոր քարտուղարի, Ծառայության պետի օգնականի պաշտոնները, կենտրոնական և տարածքային մարմինները:

7. Ծառայությանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է վերապահվել պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

8. Ծառայության գտնվելու վայրն է՝ ք. Երևան, Արշակունյաց 23:

II. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Ծառայության նպատակներն են՝

1) քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի հնարավոր անօրինական վարքագծի կանխման ու դատարանի կողմից նրա վրա դրված պարտականությունների կատարման

ապահովման միջոցառումների իրականացումը՝ այլընտրանքային խափանման միջոցների՝ տնային կալանքի և վարչական հսկողության կիրառումն ապահովելու միջոցով.

2) հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ դատական ակտով նշանակված պատժի և հարկադրանքի այլ միջոցների կատարման միջոցով սոցիալական արդարության վերականգնումը, պատժի ենթարկված անձի վերասոցիալականացումը, իսկ պրոբացիայի անչափահաս շահառուների նկատմամբ՝ նաև նրանց ֆիզիկական ու հոգեկան բնականոն զարգացման ապահովումը, նրանց դաստիարակումը և այլ անձի բացասական ազդեցությունից պաշտպանությունը.

3) հասարակության անվտանգության ապահովումը՝ կրկնահանցագործության կանխարգելման և կրճատման միջոցով.

4) պրոբացիայի շահառուի և տուժողի (տուժողի իրավահաջորդի) հաշտեցումը.

5) քրեական արդարադատության իրականացմանն աջակցությունը:

10. Ծառայության խնդիրներն են՝

1) քրեական վարույթի ընթացքում «Պրոբացիայի մասին» օրենքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կատարումը.

2) ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և դատարանի կիրառած հարկադրանքի այլ միջոցների կատարումը.

3) ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և այլընտրանքային խափանման միջոցների կատարման անհատական պլանավորումը՝ գնահատելով ռիսկերն ու հաշվի առնելով պրոբացիայի շահառուի կարիքները.

4) պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ պրոբացիայի շահառուի մասին զեկույցի տրամադրումը.

5) պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ սահմանված վերահսկողության իրականացումը.

6) պրոբացիայի շահառուի և տուժողի (տուժողի իրավահաջորդի) միջև հաշտարարության իրականացումը:

III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

11. Ծառայության գործառույթներն են՝

1) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կատարման ապահովումը.

2) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված անվտանգության միջոցների կատարման ապահովումը.

3) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ապահովումը.

4) պրոբացիայի շահառուի վերաբերյալ խորհրդատվական զեկույցների, հաշվետվությունների և միջնորդությունների տրամադրումը.

5) պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողության իրականացումը.

6) օրենքով սահմանված դեպքերում հաշտարարության իրականացումը.

7) վերասոցիալականացման միջոցառումների իրականացումը,

8) օրինապահ վարքագծի ձևավորման, վերասոցիալականացման և կրկնահանցագործությունների նվազման նպատակով ռիսկերի և պահանջմունքների գնահատման իրականացումը.

9) ռիսկերի և պահանջմունքների գնահատման արդյունքների հիման վրա անհատական վերասոցիալականացման ծրագրերի մշակումը և իրականացումը.

10) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների՝ տնային կալանքի և վարչական հսկողության, անվտանգության միջոցների, պատիժների և վերահսկողությունների հետ զուգահեռ կիրառվող էլեկտրոնային հսկողության իրականացումը.

11) օրենքով սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

IV. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

12. Ծառայության կառավարումն իրականացնում է Արդարադատության նախարարը (այսուհետ՝ Նախարար):

13. Նախարարը՝

1) հաստատում է Ծառայության կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը, և կատարում կանոնադրության փոփոխություններ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

2) օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված գործունեության ոլորտին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ սահմանում է Ծառայության գործունեության հիմնական ուղղությունները.

3) իրականացնում է Ծառայության գործունեության վերահսկողությունը.

4) լսում է Ծառայության գործունեության մասին հաշվետվությունները, քննում է գործունեության ստուգման արդյունքները.

5) վերահսկողություն է իրականացնում Ծառայությանն ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

6) հաստատում է տարեկան հաշվեկշիռը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

7) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

14. Ծառայությունը ղեկավարում է Ծառայության պետը:

15. Ծառայության պետին անմիջական հաշվետու են Ծառայության պետի տեղակալները, գլխավոր քարտուղարը, Ծառայության պետի օգնականը, կենտրոնական և տարածքային մարմինների ղեկավարները:

16. Ծառայության պետին հաշվետու են աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները:

17. Ծառայության պետը հաշվետու է Կառավարությանը, Վարչապետին, Նախարարին, Ծառայության գործունեությունը համակարգող՝ նախարարի համապատասխան տեղակալին:

18. Ծառայության պետը՝

1) պատասխանատու է Ծառայության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

2) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի

Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

3) օրենքով նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է մարմնի համապատասխան աշխատակիցներին, նշանակում է ծառայողական քննություն, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանք և նշանակում կարգապահական տույժեր.

4) հաստատում է ներքին կարգապահական կանոնները.

5) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստեղծում է իրեն կից խորհրդակցական մարմիններ.

6) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում գլխավոր քարտուղարի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները.

7) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում իր տեղակալների, գլխավոր քարտուղարի և կենտրոնական և տարածքային մարմինների ղեկավարների հանձնարարականները.

8) լսում է կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունները, քննում դրանց գործունեության ստուգման արդյունքները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

9) իր իրավասության սահմաններում ընդունում է հրամաններ, որոշումներ, տալիս ցուցումներ.

10)Նախարարին կամ Ծառայության գործունեությունը համակարգող՝ նախարարի համապատասխան տեղակալին ներկայացնում է առաջարկություններ Ծառայությանն առնչվող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.

11) իր իրավասության սահմաններում քննում է պրոբացիայի ծառայողների որոշումների, գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքները, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իր լիազորությունների սահմաններում կասեցնում, ուժը կորցրած կամ անվավեր է ճանաչում Ծառայության պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող հրամանները, որոշումներն ու ցուցումները.

12) Ծառայության անունից ներկայացնում է հաշվետվություններ.

13) ներկայացնում է Ծառայությունն այլ պետական մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում.

14) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանած կարգով տնօրինում է Ծառայությանն ամրացված գույքը.

15) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

19. Ծառայության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Ծառայության պետի տեղակալի առավել երկար ստաժ ունեցող տեղակալը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

20. Ծառայության հաստիքացուցակը Ծառայության պետի առաջարկությամբ հաստատում է Նախարարը:

21. Ծառայության պետի տեղակալը՝

1) գործում է Ծառայության պետի կողմից պատվիրակված լիազորությունների ուժով և համակարգում է աշխատանքներն (գործունեությունը) իրեն հանձնարարված բնագավառներում.

2) իր համակարգման լիազորությունների շրջանակներում Ծառայության կետրոնական և տարածքային մարմիններին փոխանցում է Ծառայության պետի հանձնարարականները, ապահովում է Ծառայության կենտրոնական և տարածքային մարմինների կողմից Ծառայության պետի հանձնարարականների կատարումը, իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով Ծառայության պետին.

3) իր համակարգման լիազորությունների շրջանակներում համագործակցում է այլ պետական մարմինների և կազմակերպությունների հետ.

4) իր համակարգման լիազորությունների շրջանակներում Ծառայության պետին ներկայացնում է առաջարկություններ.

5) իրականացնում է Ծառայության պետի կողմից տրված այլ ցուցումները և հանձնարարականները.

6) Ծառայության պետին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառում տիրող վիճակի մասին.

7) իր համակարգման լիազորությունների շրջանակում Ծառայության պետին ներկայացնում է միջնորդություն ծառայողների նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսանք կիրառելու վերաբերյալ.

8) իր իրավասության սահմաններում ընդունում է որոշումներ, տալիս ցուցումներ:

22. Ծառայությունը գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, ինչպես նաև քաղաքացիաիրավական այլ պարտականություններ ձեռք է բերում և իրականացնում է գլխավոր քարտուղարի միջոցով:

23. Գլխավոր քարտուղարը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատու է Ծառայության լիազորությունների իրականացման կազմակերպման, անձնակազմի կառավարման, ֆինանսատնտեսական գործառույթների իրականացման և քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակցության համար:

24. Գլխավոր քարտուղարին անմիջական հաշվետու են աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները:

25. Գլխավոր քարտուղարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառված վնասի համար: Գլխավոր քարտուղարի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

26. Գլխավոր քարտուղարը՝

1) առանց լիազորագրի «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմաններում հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից և ներկայացնում է նրա շահերը, կնքում է գործարքներ, իր իրավասությանը վերապահված հարցերով տալիս է լիազորագրեր.

2) օրենքով, այլ իրավական ակտերով և կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Ծառայությանն ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) օրենքով նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է Ծառայության համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

4) Ծառայության պետին ներկայացնում է Ծառայության տարեկան հաշվեկշիռը.

5) Ծառայության պետին ներկայացնում է առաջարկություններ Ծառայության կեն

տրոնական և տարածքային մարմինների աշխատանքների կազմակերպական հարցերի վերաբերյալ.

6) Ծառայության պետին ներկայացնում է աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության հաշվետվությունները.

7) իր համակարգման լիազորությունների շրջանակներում համագործակցում է Ծառայության պետի տեղակալների, այլ մարմինների և կազմակերպությունների հետ.

8) իր համակարգման լիազորությունների շրջանակներում Ծառայության կենտրոնական և տարածքային մարմիններին փոխանցում է Ծառայության պետի հանձնարականները կամ իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով Ծառայության պետին.

9) անհրաժեշտության դեպքում կնքում է կենտրոնական և տարածքային մարմինների կողմից պատրաստված, ինչպես նաև իր, Ծառայության պետի և Ծառայության պետի տեղակալների անունից պատրաստված փաստաթղթերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

10) օրենքով նախատեսված դեպքերում ընդունում է անհատական հրամաններ, տալիս հանձնարարականներ:

V. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

27. Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են.

1) Ծառայության կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումները՝

ա. Էլեկտրոնային մոնիթորինգի բաժինը.

բ. Կազմմեթոդական և վերլուծական բաժինը.

գ. Վերասոցիալականացման և վերականգնողական բաժինը.

2) Ծառայության տարածքային մարմինները՝

ա. Արագածոտնի մարզային մարմինը.

բ. Արարատի մարզային մարմինը.

գ. Արմավիրի մարզային մարմինը.

դ. Գեղարքունիքի մարզային մարմինը.

ե. Երևանի քաղաքային մարմինը.

զ. Լոռու մարզային մարմինը.

է. Կոտայքի մարզային մարմինը.

ը. Շիրակի մարզային մարմինը.

թ. Սյունիքի մարզային մարմինը.

ժ. Վայոց ձորի մարզային մարմինը.

ժա. Տավուշի մարզային մարմինը:

28. Ծառայության կենտրոնական մարմնի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) Անձնակազմի կառավարման բաժինը.

2) Ֆինանսատնտեսական բաժինը.

3) Փաստաթղթաշրջանառության և հաշվառման բաժինը:

29. Ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է Ծառայության պետը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները:

VI. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

30. Ծառայությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

31. Ծառայության գույքը ձևավորվում է օրենսդրությամբ սահմանված կարգով Ծառայության տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից:

32. Ծառայությանը հանձնվող գույքի կազմը և չափը որոշում է Կառավարությունը:

33. Ծառայությունը տիրապետում, օգտագործում, իսկ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում նաև տնօրինում է իրեն հանձնված գույքը:

VII. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

34. Ծառայությունը վարում է հաշվապահական հաշվառում և օրենքով սահմանված կարգով ներկայացնում հաշվապահական հաշվետվություններ:

35. Ծառայության ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել վերստուգման օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

36. Ծառայության ֆինանսական գործառնություններն իրականացվում են գանձապետական համակարգի միջոցով:

37. Ֆինանսական գործառնությունների իրականացման համար պատասխանատու է գլխավոր քարտուղարը, ով իրականացնում է «Գանձապետական համակարգի մասին» օրենքով սահմանված լիազորությունները:»: